108 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 23 **1898** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍԻ 23 № 108

ՔՍԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԴՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր դումայի այժմեան պատկերը. Վատիկան և Եղբզ-Քիօսկ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Փօթիից. Նամակ Շուլավէրից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Պատերազմ. Ֆրանսիական նոր մինիստրութիւնը. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՍԻՐԱԿԱՆ. Անձնասպանութիւն.

ՄԵՐ ԴՈՒՄԱՅԻ ԱՅԺՄԵԱՆ ՊԱՏԿԵՐԸ

II

Հասարակական որ և է հիմնարկութեան դրութիւնը քննելիս՝ միշտ պէտք է բաժանել երկու բան,—դէպքը և երևոյթը: Հիմնարկութեան մէջ կարող են պատահել դէպքեր, նոյն իսկ շատ անախորժ, անսովոր և տգեղ, բայց քանի որ նրանք միմեանց հետ ներքին կապ չունեցող, այլ առանձին-առանձին պատահական դէպքեր են, նրանց չէ կարելի երևոյթ համարել, և նրանցով բնորոշել հիմնարկութեան պատկերը և ուղղութիւնը: Սակայն, երբ այդ առանձին-առանձին դէպքերը սկսում են յաճախ կրկնվել, և միշտ առաջ են գալիս մի և նոյն պատճառներից, այն ժամանակ արդէն նրանք կազմում են երևոյթ, որը քննելիս պէտք է կանգ առնել ոչ թէ առանձին դէպքերի վրա, ինչքան էլ այդ դէպքերը անախորժ լինեն, այլ գլխաւորապէս ընդհանուր երևոյթի, և նրան առաջ բերող պատճառների վրա:

Ահա հէնց այդ պատճառով այս յօդուածի առաջին մասում («Մշակ» № 105), փոխանակ կանգ առնելու Թիֆլիսի դումայի յունիսի 15-ի նիստում պատահած անախորժ դէպքի վրա, մենք, սրտի ցաւով մատնանիշ արեցինք այն փաստի վրա, թէ այդ անախորժ դէպքերը հետևանք են մի ընդհանուր երևոյթի, մի սիստէմի, որ հաստատված է դումայի մէջ: Զայնաւոր Տիգրանեանի աբարքը՝ մի հասարակական հիմնարկութեան մէջ, այդ նոյն հիմնարկութեան պատուի տեսակէտից, պախարակելի է, ի հարկէ: Այդ պարզ է ամենքի համար: Սակայն որովհետև այդ անախորժ դէպքը հետևանք է մի անբնական դրութեան, որ հաստատված է դումայի մէջ, նրա նախագահի շնորհիւ, այդ պատճառով պէտք է ուշադրութիւնը կենտրօնացնել ոչ թէ դէպքի վրա, այլ նրան առաջ բերող պատճառների վրա՝ այն պարզ տեսակէտով, որ եթէ այդ պատճառները չը վերացվեն, այդպիսի դէպքեր էլի կարող են կրկնվել:

Եւ մեր խորին համոզմունքով այդ պատճառների վերացնողը պէտք է լինի քաղաքագլուխ Եւանգուլով, որը իբրև դումայի նախագահ, այնքան անտակտ կերպով է ղեկավարում գործերը, որ համարեա ամեն մի նիստում առիթ է տալիս անախորժութիւնների և ընդհարումների, աւել կամ պակաս չափով: Ինչպէս շատ լաւ նկատում է Բագուի ռուս լրագիրը, Գէորգ Եւանգուլով, իր այժմեան ընթացքին նայելով, դուցէ շատ լաւ լինի՝ իբրև մի զօրագնդի հրամանատար, բայց իբրև ինքնավարական մի մարմնի ղեկավար, նա կատարելապէս իր տեղում չէ: Նա իր ուղղութեամբ դէմ է կօլլեգիալ գործունէութեան, ապացոյց այն, որ նա մի քանի անգամ փորձեց անտես առնել զանազան որոշումները և ուղրավայի կարծիքները: Իսկ նրա անտեղի դարձուածքները, որ մենք առաջ բերինք անցեալ անգամ, և որոնք մի քանի անգամ արձանագրված են տեղական ռուս լրագիրների մէջ, պարզ ցոյց են տալիս, որ դումայի այժմեան նախագահն այն ճանապարհի վրա է կանգնած, որը դուցէ սրանից յետոյ էլ առաջ կը բերի նոր ընդհարումներ և այնպիսի անախորժ տեսարաններ, որոնցից մէկն էր յունիսի 15-ի նիստում պատահածը: Ահա թէ ինչու մենք, փոխանակ դէպքերի վրա կանգ առնելու, պնդում ենք, որ պէտք է փոխել այդ սիստէմը, որը հաստատված է այժմեան դումայի մէջ, նախագահի շնորհիւ, համոզված լինելով, որ այդ սիստէմը փոխելով արդէն՝ իրանք իրանց կը վերանան այն անկարգութիւնները, որոնց մենք ականատես ենք դումայի դահլիճում վերջին ամիսների ընթացքում:

ՎԱՏԻԿԱՆ ԵՒ ԵԼԴԶ-ՔԻՕՍԿ

Մեր ընթերցողներին յայտնի է, որ սուլթանը կամենում էր իր ներկայացուցիչն ունենալ Վատիկանում և առաջարկում էր պապին՝ նուիրակ ուղարկել Կ. Պոլիս: Սակայն Ֆրանսիական մինիստր Հանոտօ արգելեց այդ բանը, հիմնվելով այն հանգամանքի վրա, որ Թիւրքիայում գտնվող կաթոլիկ քրիստոնեաները հին ժամանակներից գտնվել են Ֆրանսիայի հովանաւորութեան տակ և Կ. Պոլսի Ֆրանսիական դեսպանը եղել է կաթոլիկ եկեղեցու շահերի ներկայացուցիչ: Պապը հարկադրված եղաւ մերժել սուլթանի առաջարկութիւնը: Շատերը բաւական հիմնաւոր պատճառաբանութեամբ հաւատացնում էին, որ սուլթանի այդ քայլը գերմանական դիպլոմատիայի թելադրութեամբ է արված. Գերմանիան կամենում էր թուլացնել Ֆրանսիայի ազդեցութիւնը Արևելքում և այդ պատճառով ձգտում է, որ Եղբզ-Քիօսկը ուղղակի յարաբերութիւններ սկսի Վատիկանի հետ: Այդ ենթադրութիւնները այժմ ճշդվում են: Գոնէ այդպէս կարելի է եզրակացնել այն խօսակցութիւնից, որ ունեցաւ պապի քարտուղարը, կարդինալ Բամպօլլա, «New-York Herald» լրագրի թղթակցի հետ:

«Ես չեմ կարող ասել ձեզ թէ ճիշդ է որ Ֆրանսիան, ինչպէս դուք էք հաւատացնում, կը զրկվի Թիւրքիայի կաթոլիկներին հովանաւորելու արտօնութիւնից, ասաց Բամպօլլա: Բայց, ինչպէս ասում են, խոտի մէջ օձ է նստած և այդ արտօնութեան վտանգ է սպառնում: Զորս թէ հինգ տարի առաջ—կարող եմ դրականապէս յայտարարել—Բ. Դուռը շահ ունէր, որ Ֆրանսիան հովանաւորէ Թիւրքիայի կաթոլիկներին. այդ բանի մէջ նա բաւարարութիւն էր գտնում իր համար: Բայց Յունաստանի վերջին հաշտութիւնը կնքելուց յետոյ Բ. Դրան հայեացքները կարող էին փոխվել: Բանն այն է, որ «հիւանդ մարդը», յաղթելով յոյներին, զգաց իր ոյժը և գտաւ, որ իր համար ստորացուցիչ բան է օտարի հովանաւորութեան ենթարկվել: Յիշեցէք, որ Բերլինի դաշնագրից յետոյ շատ բան փոխվեց: Եւ Ֆրանսիան ի՞նչ աբրաւ կաթոլիկներին հովանաւորելու համար անկախ այն միջոցներից, որ ձեռք առան մեծ պետութիւնները բոլոր թիւրքահպատակ քրիստոնեաներին հովանաւորելու համար: Ես Ֆրանսիան աւելի մեղաւոր եմ համարում, քան միւս պետութիւնները, որովհետև նա հէնց սկզբից չը բողոքեց հայերի վրա գործադրած բռնութիւնների դէմ: Այդ սխալից նրա վարկը ամբողջ աշխարհում սաստիկ վնասվեց: Վաղուց անհետացել է Ինոկենտիոս VIII պապի տենչանքը թիւրքերին Եւրոպայից վռնդելու մասին: Թիւրքիան առաջնակարգ պահպանողական պետութիւն է դարձել, և բնական է, որ նա ուզում է լինել ազատ և Ֆրանսիական հանրապետութեան հովանաւորութիւնից դուրս գալ: Ինչ վերաբերում է Լէոն XIII պապին, նա երկիւղ է կրում որ հռոմէական եկեղեցին Ֆրանսիայում հալածանքի կենթարկվի, հէնց որ կառավարութիւնը կանցնի Լէօն Բուրժուայի ձեռքը: Եւ այս պայմանների մէջ Հռոմի աթոռը կատարելապէս ազատ պիտի լինի իր գործողութիւնների մէջ:» Ի վերջոյ, կարդինալ Բամպօլլա խօսեց Վիլհելմ կայսրի առաջիկայ ճանապարհորդութիւն 1,863 և 1879 թվին 2,515 անձնասպանութիւն է տեղի ունեցել, այսինքն 14 տարվայ մէջ աւելի քան կրկնապատկվեց:

Իտալիայում 1875 թվից յետոյ անձնասպանութեան չափազանց աճումը աւելի շատ երևան եկաւ. նոյն տարվայ մէջ 922 դէպք արձանագրված էր, և 1880 թվին 1,261 դէպք պատահեց:

Հոլանդիայում 1875 թվից յետոյ անձնասպանութեան աճումը այնքան էլ զգալի չէ եղել:

Ռուսաստանում, վիճակագրութեան նայած, անձնասպանութեան աճումը շատ հնչին է երևում: Սակայն այս վիճակագրութիւնը շատ թերի է կազմված: Նոյն բանը ապացուցանել աշխատում է մի յայտնի ռուս գրող՝ Լիչայչէվ (?) որը Պետերբուրգի համալսարանից պակված իր մի աշխատասիրութեան մէջ յայտարարում է՝ թէ 72 տարիներից ի վեր Ռուսաստանում անձնասպանութիւնների թիւը կրկնապատկվել է: Պատճառը՝ բաղմամարդութեան աճումից աւելի, պէտք է վերագրել աչքի ընկնող արբեցողութեան աւերումներին, ինչպէս որ վերջերս բժիշկ Արծրունի «Մշակի» մէջ ապացուցանում էր նոյն բանը, ալկօհոլականութեան վրա իր գրած լուրջ յօդուածով:

Ֆրանսիայում 1827 թվից մինչև 1830 թիւը անձնասպանութիւնների թիւը տարին 1,739-ից չէր անցնում, մինչդեռ 1875-ից մինչև 1879 թիւը՝ տարին 6,250-ի էր հասել, ինչ որ այս 52 տարվայ շրջանում 100-ին 260 աճում է ցոյց տալիս: 1884 թուականի համար վիճակագրութիւնը հետևեալ թիւերն է ցոյց տալիս. 1881 թվին 6,741,—1882 թվին 7,313,—1883 թվին 7,267 և 1884 թվին 7,572 անձնասպանութիւններ: Բաղմամարդութեան համեմատութեամբ՝ 1851 թվից մինչև 1855 թիւը, տարին 100,000 բնակչի վրա 10 անձնասպանութիւն են հաշում. 1855-ին այս թիւը 20-ի

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԵՒ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Անձնասպանութիւնն, ինքն իրան սպանել, մի կամաւոր մահ է: Աչխարհի չափ հին է, ամենուեղ և միշտ. բարոյական և ֆիզիքական տանջանքներին վերջ տալու համար՝ անձնասպանութիւնը ներկայացել է մարդկային մտքին իբրև մի վճռական միջոց:

Սուրբ գիրքը մեզ պատմում է Սամսօնի, Եղիազարի, Ռօզիասի, Սաուղ թագաւորի և ուրիշների մի շարք անձնասպանութիւնները:

Զինաստանում, միշտ, չարագործութիւններով մեղապարտ բարձր պաշտօնատարները հասարակական պատժի խայտառակութիւններից պրծնելու համար, իրանց փորերը ճղում էին:

Հնդկաստանում մերկանդամ իմաստասէրների և բրահմաների համար կամաւոր մահը միշտ մի պատիւ էր համարվում:

Աֆրիկայում Սեսոստր, իր տեսողութիւնը կորցնելուն վրա անմխիթար, անձնասպան եղաւ. յաղթված Անիբալ և Ամիլկար զօրապետները իրանց դժբաղդութիւնների համար այլ ևս ապրել չուզենալով, իրանք իրանց դաշոյնահար արին. սպանեցէք և նուամիդացէք իրանց յաստուկ բանակը ջարդեցին, որպէս զի նրանք իրանց յաղթողի՝ հռոմայեցիների ձեռքում ողջ չը մնան:

Եւրոպայում բազմաթիւ զինուորներ, գիտուններ և փիլիսոփաներ անձնասպան են եղել. բաւականանք հետևեալ անձնասպանութիւնները յիշելով.—Կողրոս, Մէնէկէոս, Կղէոմէն, Արիստոմեն, Զենոն, Կղէանթ, Դիոգենէս, Արիստարքոս, և այլն: Հռոմայեցիների կայսրութեան շրջանում անձնասպանութիւնը, հասարակական ամեն դասակարգերի մէջ, ճշմարիտ համաճարակի նըման մեծ ջարդ էր տալիս:

Յետոյ, անձնասպանութեան անդադար ծաւալումը արգելելու նպատակով, անձնասպանի յիշատակը, օրինական ճանապարհով, խայտառակութեան մատնվեցաւ. դիակը ոտտահիւս սակառի վրա դնելով՝ քաղաքի փողոցներում քաշ էին տալիս և խայտառակում, յետոյ գլխիվար խաչում էին. անպատւում էին անձնասպանի ընտանիքը՝ իր անդամներից մէկի յուսահատութիւնը կանխաւ չանհետացնելուն և կամ նրա նախապատճառը դառնալու յանցանքի մէջ մեղադրելով: Այժմս իսկ Անգլիայում անձնասպանի ստացուածքը կառավարութիւնը գրաւում է, թէև այս օրէնքը քիչ անգամ է գործադրութեան դրվում և գրեթէ միշտ ժառանգորդները կամ դատարանները նրանից պրծնելու մի միջոց գտնում են: Մինչև անդթութեան հասած այս խստապահանջ օրէնքը, թէև մի քանի լաւ արդիւնքներ արտադրել է, սակայն շատ երկար չէ տևել:

Միջին և ոչ էլ վերջին դարերում տեղի ունեցած անձնասպանութեան պատմութիւնն այստեղ չենք կարող մէջ բերել, այդ մեզ շատ հեռու կը տանի: Միայն Մօնտէնեյի հետ յիշում ենք, որ Ֆրանսիայում ամենից հռչակաւոր հին անձնասպանն եղել է Սուասօնի եպիսկոպոս Ժաք-Դիւ Շաստէլ:

Այսօր, երբ գոյութեան կռիւն աւելի բուռն է, քան երբ և իցէ, անձնասպանութիւնը ամենից վտանգաւոր մի ախտաբեր խանդարում և գուցէ արդի մարդկային ընկերութեան համար բոլորովին անբուժելի է դառնում: Ամեն օր հարիւրներով են հաշում անձնասպանութիւնները, և այս վերջին քառասուն տարիներում հանրութեան միտքը սաստիկ յուզվել է: Անհաւասիկ յիշատակենք երևելի անձնասպաններից մի քանիսը ժամանակագրական քիչ շատ ճշդութեամբ.—Կրօս և Լէօպոլդ Ռօբէր նկարիչներն, Նուրբի երգիչն, Ժէրար-դը Նէրվալ, Մարաէն մինիստրը, Շուազէօլ դուքսն, Բրէսօն դեսպանն, Բարթէզ և Պարիզօ երևելի բժիշկները, Պրէվօստ-Պարադօլ հրապարակագիրը, նախկին մինիստր Բէօլէ, սենատի անդամ Վալանտէն, Նէյ և Լարդէնուա զօրապետները, և այլն:

Զանազան ազգերի մէջ անձնասպանութեան վիճակագրութիւնը:—Անձնասպանութիւնների վիճակագրութիւնը ապացուցանում է թէ 1866 թուականներից յետոյ՝ նրանց թիւը, օտար երկիրներից աւելի, Ֆրանսիայում նշանաւոր համեմատութեամբ աւելացել է. բերում ենք մի քանի ապացոյցներ:

Գերմանիայում 1866 թվին 4,861 և 1879 թվին 8,689 անձնասպանութիւններ ըստուգված են, այսինքն 100-ին 78,7 աճում: Այս աճումը բազմամարդութեան հետ բաղդատելիս աւելի բարձր է լինում. նոյն ժամանակամիջոցում 5,588,517 բնակիչ աւելացած է, այսինքն 100-ին 14, մինչդեռ անձնասպանութիւնը 100-ին 78,7:

Անգլիայում համեմատութիւնը 1866-ին մի միլիոն բնակչի վրա 66 էր. 1880-ին 74,2 տակոս բարձրացած է: Անձնասպանին ստացուածքը կառավարութեան կողմից գրաւումը արգելելու համար, մասնաւոր երդուեալներ գրեթէ միշտ այս կէտի վրա մերժողական վճիռներ են տալիս և այդ պատճառով այս երկրում անձնասպանութեանց ստոյգ թիւը չէ իմացվում: 1886-ին «Լօնդօնի վիճակագրական ընկերութեան» արած մի հաղորդագրութեան մէջ Պ. Օգլը ցոյց տուեց՝ թէ վերջի տարիների ընթացքում տեսնված անձնասպանութեան յաճախակի աճումը և մինչև 1884 թուականը ամուսնական արձանագրութիւնների տարիներում ստորագրելու կարող անհատների թվի աւելանալը ուշադրաւ մի զուգադիպութիւն է ներկայացնում:

Աւստրիայում 1866 թվին 1,263, 1873

թեան մասին և կարծիք յայտնեց, թէ պապը մի շատ մօտիկ ապագայում պաշտպանութիւն կը գտնէ բողոքական և ուղղափառ թագաւորների կողմից, բայց ոչ թէ այն կաթոլիկ պետութիւնների կողմից, որոնց կառավարում են արմատական մինիստրութիւնները:

Եւ այսպէս, դուրս է գալիս, որ թէ Վատիկանը և թէ Եղբղ-Ֆիսկը ուզում են ազատ գործել: Երկուսի ձգտումն է գրկախառնվել, երկուսի համար էլ աւելորդ բան է Ֆրանսիայի հովանաւորութիւնը: Թիւրքիայի կաթոլիկների համար, կարծում ենք, մի և նոյն կը լինի թէ ոմ է իրանց հովանաւորը—երրորդ հանրապետութիւնը, թէ ս. Պետրոսի աթոռը: Դուցէ վերջինս աւելի սրտացաւութիւն ցոյց տայ, մի բան, որից բոլորովին զուրկ էր Հանոտօի Ֆրանսիան, որը, իբրև վարձատրութիւն իր բռնած դիրքի, այսօր ստիպված է լուռ ու մունջ տեսնել թէ ինչեր են անում գերմանական ծրագիրները Թիւրքիայում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՓՕԹԻՑ

—

Յունիսի 18-ին

Մեր գաւառական քաղաքների մէջ Փօթին անչուշտ առաջնակարգ տեղ է բռնում, որովհետև ունենալով լաւ նաւահանգիստ և կենտրոն լինելով եգիպտացորենի և մարգանեցի արտահանութեան համար, չարունակ չփման և չարժման մէջ է: Արտասահմանեան և մանաւանդ անգլիական նաւերը անընդհատ բեռնաւորվում են վերոյիշեալ բերքերով, որոնց էկսպլուատացիան գլխաւորապէս յոյների և ֆրանսիացիների ձեռքին է, և շատ քիչ էլ հայերի ձեռքին:

Նաւահանգստում բանող մշակների մեծամասնութիւնը Թիւրքիայից գաղթած թշուառներն են, որոնք ունեն կազմակերպած խմբեր՝ բանտարական արտելների նման, և աշխատում են օրական 40—60 կօպէկով: Պէտք է տեսնել այդ խեղճերի դրութիւնը, երբ, երեկոյեան, մութի մէջ թաթախված մտնում են ծովը լուացվելու. յոգնած և դունատ, սեացած հացը կծոտելով նրանք վերադառնում են խումբ խումբ իրանց բնակարանները մի փոքր կազդուրվելու և միւս օրը նոյն ժամանելի աշխատանքը կատարելու: Մենք ականատես էինք երկաթուղու կայարանում մարգանեց բարձող մշակների աշխատանքին և տեսանք՝ ինչպէս նրանք վերջացնելով գործը՝ թափվեցին կայարանի մօտի ճահիճները և սկսեցին հոսած ջրով լուացվել: Նրանցից մեծ մասը բռնված է տեղական malaria-ով և միջոց չունի նրանից ազատվելու:

Գալով քաղաքին և նրա ազգաբնակութեան՝ պէտք է ասենք, որ չը նայած եկամուտների աւատութեան և նաւահանգստից ստացված մեծ արդիւնքներին, դեռ քիչ բան է արված տեղական կարիքների համար: Մինչև այսօր չը կայ մի ընթերցարան կամ դրադարան, որտեղ հնարաւոր լինէր գտնել Թիֆլիսի լրագիրները կարդալ, չը կան զբօսարաններ, բայի մի այգիից, չը կայ մի պրոգիմնազիա, որի կարիքը ըստ երևոյթին շատ մեծ է, որովհետև Մինգրելիայի և Աբխազիայի ազգաբնակութեան համար յարմար կենտրոնը Փօթին է, չը կայ կանալիզացիա և այն:

Այս վերջինս աւելի անհրաժեշտ է այն պատճառով, որ անձրևից յետոյ ջուրը մնում է լճացած տների առաջ և բակերում ու տաք եղանակին օդը լցվում է ճահճային միազմներով: Պէտք է յուսալ, որ քաղաքագլուխ Նիկոլաձէն չի մոռանայ քաղաքի ամենակարևոր կարիքը—պրոգիմնազիան և միջոցներ կորոնի իրագործելու այդ ցանկալի գործը:

Սա. Մազմանեանց

ՆԱՄԱԿ ՇՈՒԼԱՎԷՐԻՑ

—

Յունիսի 17-ին

Յունիսի 8-ին եկած կարկուտը, սաստիկ քամու և անձրևի հետ միասին՝ բոլորովին ոչնչացրեց Դեբեդ գետի հովտի արտերը և խոտհարքի տեղերը: Վնասված են մօտ 10 թուրքաբնակ գիւղեր. բնակիչների դրութիւնը շատ ցաւալի է. խեղճերը ուտելու հաց չունէին, սպասում էին հնձին, բայց դրանից էլ այժմ զրկված են: Այդ դեռ հերիք չէ, եկող տարվայ համար էլ սերմացու չունեն: Վնասվել են ցորենի, գարու, չալթուկի արտերը, այգիները և բոստանները մօտ 1600 դեսեատին տարածութեամբ. վնասը հաշուում են մօտ 120,000 ռուբլի: Ինչպէս լսում ենք, կարկուտը վնասել է նոյնպէս Վօրոնցովկա գիւղը իր շրջակայքով: Այնտեղ էլ վնասը ահագին է: Շուլավէրի արտերը այս տարի լաւ հունձ են խոստանում, այդիները միջակ, եթէ ի հարկէ, կարկուտից չը վնասվեն:

Երկար ժամանակ թուրք աւազակային խմբերի մասին լուր չը կար: Շնորհիւ պօլիցիայի ձեռք առած խիստ միջոցների՝ նրանք թաղնված էին և տեղներից չէին շարժվում: Սակայն այդ լռութիւնը խանգարվեց այս շաբաթում տեղի ունեցած ընդհարումներով և այն էլ ոչ առանց մարդկային զոհի: Յունիսի 15-ին, Սիբիրից փախած երեք աւազակներ, Թիֆլիսի գաւառից անցնելով Նալդուջի լեռները և մտնելով մեր գաւառը, թուրքաբնակ Քեչալու գիւղի մօտ պատահում են պանակ կօղակների խմբին: Սկսում է հրացանաձգութիւնը, որի միջոցին թուրքերը սպանում են մի կօղակ և օգտվելով առաջ եկած շփոթութիւնից՝ նորից անհետանում: Երկրորդ ընդհարումը տեղի է ունենում Լօռում, յունիսի 16-ին, որտեղ աւազակներին հետամուտ եղած ժամանակ, սպանվում է մի հայ չափար: Խիստ միջոցներ են ձեռք առնված յիշեալ աւազակներին ձերբակալելու համար:

Ա. Ի.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Թիֆլիս, յունիսի 21-ին

«Անհատ և մասսա» վերնագրով յօդուածը («Մշակ» № 104 և 105) իր վերջին մասում կամենում է ցոյց տալ թէ մասսան ամեն ինչ է, իսկ անհատը լոկ մասսայի առաջ բերած արդիւնքն է: Գոնէ այս կարելի է եզրակացնել յօդուածագրի հետևեալ խօսքերից. «Հաւատացէք, որ եթէ այն ժամանակ Մատթէոս Իզմիրլեանը չը լինէր, ազգը, մասսան, ժամանակամիջոցը, հանգամանքները ի մի ձուլված՝ Կիրակոս Իզմիրլեանի ձեռքից բռնած՝ կը բերէին և կը բազմեցնէին Պօլսի պատրիարքական աթոռի վրա»:

Ես չեմ հաւատում: Թէօրիայով գուցէ այդպէս պիտի լինէր, բայց իրականութիւնը մեզ այլ դասեր է տալիս: Ներսէս Աշտարակցիները, Վարժապետեանները, Իզմիրլեանները, դժբախտաբար, ասուպներ են մեր հորիզոնի վրա: Եթէ մասսան, հանգամանքները և այլ ինչ կուզէք կարողանային ի մի ձուլել՝ տաղանդներ առաջ քաշելու համար, այդ բանին մենք ականատես կը լինէինք շատ անգամ: Եւ եթէ այդ ֆատալիստական հաւատն ունենանք, ամեն ինչ պիտի թողնենք մասսային, ընդունելով որ Վեհապետեանները, Աշըղեանները, Բարթուղիմէոսները ինքն ըստ ինքեան բացասական հասկացողութիւն չեն ներկայացնում, օլիգարխիայի, էֆէնդիական դասի արքանեակներ չեն, այլ մասսայի տրամադրութեան ծնունդ: Այսպէս առաջ տանելով մեր դատողութիւնները, կը հասնէինք այն անհեթեթութեան, թէ մասսան մի կուռք է, որի քմահաճութիւնները օրէնք պիտի լինեն նրա երկրպագուների համար, թէ դա մի սֆինքս է, որ սիրում է իր սեփական դժբախտութեան համար Արտիներ ծնել, իսկ երբեմն էլ մեղք չէ համարում իր սիրտը քաղցրացնել, ուստի Ռամիզներ է լոյս հանում:

Բայց այդպէս է մասսան: Եւ առհասարակ ինչ է մասսան: 1884 թ-ին Գլադստոնի ջանքերով 2 միլիոն անգլիական գիւղացիներ ընտրողական իրաւունք ստացան: Սա նշանակում էր թէ կառավարութիւնը ընդունում էր, որ իր գործունէութիւնը պիտի ժողովրդի քննութեան ենթարկէ, պիտի նրա հաճութիւնը, նրա կամքը հարցնել: Եւ երբ 1886-ին այդ իրաւունքը ամբողջը չը տուեց Գլադստոնին մեծամասնութիւն Իրլանդիայի ինքնավարութիւնը անցկացնելու համար, դա պարզ նշան էր որ մասսան դեռ պատրաստված չէ և չէ ուզում Իրլանդիայի հարցը լուծել արդարութեան տեսակէտից: Մասսան այդտեղ այժ էր, վճռող էր, նրա տրամադրութիւնը մի ամենի ժայռ էր: Ժողովրդին այդ իրաւունքը տուողները ասում էին. «Կամենում էք, որ հասարակ ամբոխը դառնայ այժ, թև ու թիկունք,—պատասխանատու դարձրէք նրան այն ամենի համար, ինչ կատարվում է այս երկրում»: Պատասխանատու դարձրին ինքնաճանաչութեան հասած մասսան, և նա չը տուեց իր հաճութիւնը իրլանդական ծրագրի վերաբերմամբ: Աղատ ընտրողը իր գաղտնի քուէի միջոցով ցոյց էր տալիս, որ ինքը դեռ պատրաստված չէ մի այդպիսի մեծագործութեան համար: Անգլիայից անցէք Զինաստան: Այդտեղ էլ կայ մասսա, բայց նա նոյնպէս պատասխանատու է, կը համարձակվի իր սեփական կարծիքն ունենալ: Ոչ: Այնտեղ դասակարգային բռնապետութիւնն է տիրում և մասսայի ցանկութիւնը գոյութիւն չունի, մեռած է: Այդպիսի տեղերում դասակարգերը մեծ նշանակութիւն ունեն. նրանք կարող են ոչնչացնել և վերաստեղծել: Եւ մենք տեսնում ենք, որ անհատները հասարակութեան այդպիսի կարգերի մէջ շատ անգամ ոչ միայն մասսայի տրամադրութեան արդիւնք չեն, այլ, ընդհակառակն, ներկայացնում են ժամանակից առաջ աշխարհ եկած հանճարներ. դրանց և մասսայի տրամադրութեան մէջ տեղի է ունենում ահեղ կռիւ, որ վերջանում է անհատի նահատակութեամբ: Այդ նահատակներն են եղել լոյսի, ազատութեան կարապետները: Նրանց յայտնի չէ եղել յօդուածագիր պ. Գ. Կ.—ի պաշտած խղճուկ դաղափարը, որին կը դիմենք այժմ:

Նա ասում է թէ ինտելիգենցիան հետևում է մասսայի տրամադրութեան, «առանց որի նա մի քայլ անգամ չէ կարող անել»: Մի քայլ անգամ... Ո՜րպիսի անողորմ չափ. որպիսի խղճուկ մոլորութիւն, որ պաշտպանվում է անճնապաստանութեամբ, քափ ու քրտինքով: Չը գիտեմ ունի յօդուածագիրը մասսայի տրամադրութեան ստրուկ գործիչների օրինակներ. մեզ յայտնի անթիւ օրինակները ցոյց են տալիս, որ իսկական ինտելիգենցիան տրամադրութիւն է ստեղծում մասսայի մէջ և ոչ թէ գնում է նրա ետևից: Մեր ազգաւոր կեանքում էլ փայլուն օրինակներ պակաս չեն: Եթէ Գրիգոր Արծրունին մի բօլէ հաւատար թէ «մի քայլ անգամ չէ կարող անել», երբէք այնպիսի կրակոտ եռանդով չէր բարձրացնի կրօնական անխարութեան հարցը, քանի որ մասսան իր ամբողջ էութեամբ դէմ էր այդ մտքին: Մի ուրիշ օրինակ: Մի՞թէ մասսայի տրամադրութիւնն էր, որ հարկադրեց Ստեփանոս Նազարեանցին խօսել վերանորոգչի, անխնայ քանդողի լեզուով: Եթէ «տրամադրութիւն» բառի տեղ դուք գործ ածէք պարզապէս «դրութիւն» բառը, այն ժամանակ բոլորովին ուրիշ կերպ կը խօսէիք: Ի՞նչ է մասսայ հերոսութիւնը:—Ջարդել, ոչնչացնել մասսայի տրամադրութիւնը, ստեղծել նոր տրամադրութիւն: Եւ նկատեցէք որ տրամադրութիւն ստեղծելը առաջաւոր, ինտելիգենտ մարդկանց պարտքն է ոչ միայն այն տեղերում, ուր մասսան իրաւազուրկ տօտ է, այլ և աւելի առաջադէմ երկիրներում, ուր մասսան վճիռ ու ցանկութիւն յայտնելու իրաւունք ունի: Այսպէս, ազատ առևտրի միտքը օրէնսդրութիւն դարձնելու համար Կօբդը և Բրայտ երկար ժամանակ պիտի պատրաստէին տրամադրութիւն մասսայի մէջ: Վերևում մենք տեսանք մասսայի չկամութիւնը իրլանդական հարցի վերաբերմամբ: Ինչպէս, ազատ առևտրի մասսա, բայց նա նոյնպէս պատասխանատու է, կը համարձակվի իր սեփական կարծիքն ունենալ: Ոչ: Այնտեղ դասակարգային բռնապետութիւնն է տիրում և մասսայի ցանկութիւնը գոյութիւն չունի, մեռած է: Այդպիսի տեղերում դասակարգերը մեծ նշանակութիւն ունեն. նրանք կարող են ոչնչացնել և վերաստեղծել: Եւ մենք տեսնում ենք, որ անհատները հասարակութեան այդպիսի կարգերի մէջ շատ անգամ ոչ միայն մասսայի տրամադրութեան արդիւնք չեն, այլ, ընդհակառակն, ներկայացնում են ժամանակից առաջ աշխարհ եկած հանճարներ. դրանց և մասսայի տրամադրութեան մէջ տեղի է ունենում ահեղ կռիւ, որ վերջանում է անհատի նահատակութեամբ: Այդ նահատակներն են եղել լոյսի, ազատութեան կարապետները: Նրանց յայտնի չէ եղել յօդուածագիր պ. Գ. Կ.—ի պաշտած խղճուկ դաղափարը, որին կը դիմենք այժմ:

Նա ասում է թէ ինտելիգենցիան հետևում է մասսայի տրամադրութեան, «առանց որի նա մի քայլ անգամ չէ կարող անել»: Մի քայլ անգամ... Ո՜րպիսի անողորմ չափ. որպիսի խղճուկ մոլորութիւն, որ պաշտպանվում է անճնապաստանութեամբ, քափ ու քրտինքով: Չը գիտեմ ունի յօդուածագիրը մասսայի տրամադրութեան ստրուկ գործիչների օրինակներ. մեզ յայտնի անթիւ օրինակները ցոյց են տալիս, որ իսկական ինտելիգենցիան տրամադրութիւն է ստեղծում մասսայի մէջ և ոչ թէ գնում է նրա ետևից: Մեր ազգաւոր կեանքում էլ փայլուն օրինակներ պակաս չեն: Եթէ Գրիգոր Արծրունին մի բօլէ հաւատար թէ «մի քայլ անգամ չէ կարող անել», երբէք այնպիսի կրակոտ եռանդով չէր բարձրացնի կրօնական անխարութեան հարցը, քանի որ մասսան իր ամբողջ էութեամբ դէմ էր այդ մտքին: Մի ուրիշ օրինակ: Մի՞թէ մասսայի տրամադրութիւնն էր, որ հարկադրեց Ստեփանոս Նազարեանցին խօսել վերանորոգչի, անխնայ քանդողի լեզուով: Եթէ «տրամադրութիւն» բառի տեղ դուք գործ ածէք պարզապէս «դրութիւն» բառը, այն ժամանակ բոլորովին ուրիշ կերպ կը խօսէիք: Ի՞նչ է մասսայ հերոսութիւնը:—Ջարդել, ոչնչացնել մասսայի տրամադրութիւնը, ստեղծել նոր տրամադրութիւն: Եւ նկատեցէք որ տրամադրութիւն ստեղծելը առաջաւոր, ինտելիգենտ մարդկանց պարտքն է ոչ միայն այն տեղերում, ուր մասսան իրաւազուրկ տօտ է, այլ և աւելի առաջադէմ երկիրներում, ուր մասսան վճիռ ու ցանկութիւն յայտնելու իրաւունք ունի: Այսպէս, ազատ առևտրի միտքը օրէնսդրութիւն դարձնելու համար Կօբդը և Բրայտ երկար ժամանակ պիտի պատրաստէին տրամադրութիւն մասսայի մէջ: Վերևում մենք տեսանք մասսայի չկամութիւնը իրլանդական հարցի վե-

---

էր բարձրացել: Ուրեմն, 30 տարվայ ընթացքում իրական և համեմատական թիւերը կրկնապատկվել են: Սէնի նահանգը 1884 թ-ին 1,420 անձնասպանութիւն էր հաշուում, այսինքն ամբողջ Ֆրանսիայի անձնասպանների գրեթէ վեցերորդ մասը:

Շվէդիայում, Նորվէգիայում և Շվէյցարիայում տարէց տարի մի յառաջխաղաց շարժում հաստատված լինելը յիշելով բաւականանում ենք:

Անձնասպանութեան վրա շատ նշանաւոր մի աշխատասիրութեան մէջ (Dictionnaire encyclopédique des sciences médicales) պարն Լըգուայտ գրեթէ մինչև 1880 թ-ականը հանելով, ամենաճշմարիտ աշխարհամարի վրա հիմնված, բազմամարդութեան բաղադրմամբ (մի անձնասպանութեան հանդէպ բնակիչների թիւը) անձնասպանութիւնների հետևեալ տեղեկագիրն է տալիս:

190,548 բնակչի վրա մի անձնասպանութիւն՝ . Ունգարիայում.
88,742 . . . . Իրլանդիայում.
70,747 . . . . Սպանիայում.
42,700 . . . . Ռուսաստանում.
32,522 . . . . Շվէդիայում,
32,418 . . . . Ֆինլանդիայում.
26,819 . . . . Հօլլանդիայում.
23,227 . . . . Իտալիայում.
13,227 . . . . Նորվեգիայում.
13,122 . . . . Անգլիայում.
10,012 . . . . Բելգիայում.
8,666 . . . . Աւստրիայում.
5,950 . . . . Ֆրանսիայում.
4,206 . . . . Գերմանիայում.
4,060 . . . . Շվէյցարիայում.
3,930 . . . . Դանիայում.

«Շատ ճիշդ է, ասում է Լըգուայտ, որ այս տեղեկութիւնների ճշգրտութիւնը կարելի չէ երաշխաւորել. ամեն տեղ անձնասպանութիւնների ապացոյցները մեծ դժուարութիւն են ներկայացնում, նոյն իսկ այն երկիրներում, ուր պատժական դատարանները աւելի լաւ են կազմակերպված:»

Սակայն բոլոր այս քաղուածքներից կարելի է հետևցնել, որ այսօր, կէս դարուց ի վեր, անձնասպանութիւնների թիւը խիստ մեծացել է:

Սեռի և տարիքի ազդեցութիւնը անձնասպանութեան վրա:—Սեռի ներգործութիւնը թէև ստոյգ է, սակայն ամեն տեղ հաւասար համեմատութիւն չէ ներկայացնում: Շվէյցարիայում և Բելգիայում կիները նուազ անձնասպան են լինում. Ունգարիայում և Անգլիայում շատ աւելի թիւով: Այս վերջին երկրում, ինչպէս պ. Օգլը յայտարարել է Լօնդոնում 1866-ին, անձնասպանութիւնը 15-ից 20 տարեկան կանանց մէջ տղամարդկանցից շատ աւելի յաճախ է պատահում. 15 տարեկանից վար և 20 տարեկանից վեր հակառակն է պատահում, սակայն 60 տարիքից յետոյ տարբերութիւնները շատ աննշան են լինում:

Ֆրանսիայում կանանց անձնասպանութիւնը 10 տարեկան հասակում շատ է լինում, 15 տարեկան հասակում, գրեթէ տղամարդկանց հաւասար, և մինչև 65 տարիքը հետզհետէ բարձրանում է. այս տարիքից վար գրեթէ միշտ հաւասարութիւն է տիրում:

Այս խնդրով զբաղվող բոլոր հեղինակներն այս կէտի վրա համաձայնում են և անձնասպանութեան համար կնոջ կանխահասութիւնը խոստովանում: 1876 թ-ականից մինչև 1880 թ-ականը անձնասպան եղող 100 կանանց վրա 9 կին են հաշուում, որ իրանց 20 տարիքը չէին լրացրել. մինչդեռ նոյն տարիքը ունեցող և մի և նոյն համեմատութեան մէջ 4 տղամարդ է գտնվել: Ֆրանսիայում հրատարակված վերջին վիճակագրութիւնը հետևեալ համեմատութիւնն է մեզ ցոյց տալիս:

Մի միլիոն բնակչի վրա երկու սեռից եղած անձնասպանութիւնը.

10 տարեկան		3,54	տղամարդ և	8,80 կին.
15	»	24,74	»	24,20 »
20	»	65,16	»	32,93 »

Այս ցուցակից պարզ երևում է, որ 10 տարեկան իրական սեռի մէջ պատահած անձնասպանութիւնը արական սեռի մէջ պատահածի գրեթէ եռապատիկն է: Այս համեմատութիւնը ամեն երկիրների համար գրեթէ նոյնն է, բացի Սաքսոնիայից, ուր կնոջ համար համեմատութիւնը Ֆրանսիայից շատ աւելի մեծ է: Կարելի է հետևցնել, թէ բոլոր մեծ քաղաքներում, մասնաւորապէս Պարիզում կնայք մինչև 30 տարեկան հասակը տղամարդերից աւելի շատ են անձնասպան լինում:

Մանուկների անձնասպանութիւն շատ քիչ է պատահում. պաշտօնական վիճակագրութիւններին նայելով՝ 1876-ից ի վեր հակումն աւելացել է: Այսպէս, 16 տարիքը սահման ընդունելով, 1836 թ-ից մինչև 1840 թ-ականը միայն 19 անձնասպանութիւն են հաշուել, մինչդեռ 1876-ից մինչև 1880 թ-ականը նրանց թիւը 50-ի է բարձրացել: Այս վերջին չրջանի տասողութեան միջոցում մանուկների անձնասպանութիւնների գումարը 252-ի է հասել, մի թիւ, որ հետևեալ կերպով է բաժանվում. 15 տարեկան՝ 103 անձնասպանութիւն, 14 տարեկան՝ 66 հատ, 13 տարեկան՝ 40 հատ, 12 տարեկան՝ 21 հատ, 11 տարեկան 12 հատ, 10 տարեկան՝ 4 հատ, 9 տարեկան՝ 4 հատ, 8 տարեկան՝ 1 հատ և 7 տարեկան՝ 1 հատ:

Ամուրիութեան, ամուսնութեան և այրիութեան ազդեցութիւնը անձնասպանութեան վրա:—Բոլոր երկիրներում ամուրիների և այրիների անձնասպանութիւնները երկու սեռի համար էլ՝ ամուսնացած անհատներից աւելի յաճախ են պատահում:

Արուեստների ազդեցութիւնը.—Ֆրանսիայում ամենից աւելի անձնասպանութեան զիմողները եղել են անարուեստ և թշուառ անհատները, յետոյ կարգով գալիս են վաճառականները, արուեստաւորները, ազատ արուեստի ծառայողները: Ծառաների և հողագործների մէջ անձնասպանութիւնը հազուադէպ է: Զինուորական ծառայութիւնը Ֆրանսիայում չորս տարիի վերածվելուց ի վեր՝ անձնասպանութիւնը բանակում նուազել է:

Անտարակոյս, ըստ Պ. Օգլիի, Անգլիայում 1876 թ-ականից մինչև 1883 թ-ականը զանազան արուեստների մէջ պատահած անձնասպանութիւնների թիւը: 1,149 զինուորական, 650 պանդոկների ծառայող, 474 պանդոկապետ և ճաշարանապետ, 472 բժիշկ, 444 դեղագործ, 408 փաստաբան, 407 մսավաճառ և ձկնավաճառ, 139 հոգևորական, 96 նաւաշինող, 74 հանքագործ:

Տնտեսական և քաղաքական տագնապների ազդեցութիւնը.—Տնտեսական և քաղաքական տագնապներն այս ինչ կամ այն ինչ արուեստների պատկանող թիւերը կարող են մեծապէս փոփոխութեան ենթարկել: Այսպէս, Լըգուայտ անձնասպանութիւնների աւելանալը, 1876 թ-ից ի վեր՝ արուեստային և երկրագործական տագնապների է վերագրում:

Եղանակների ազդեցութիւնը.—Ընդհանրապէս կարծում են թէ անձնասպանութիւնը մանաւանդ նոյեմբերին և տարվայ ցուրտ ու մթագնած ամիսներում յաճախ է պատահում: Հէնց սխալն էլ այդտեղ է. ընդհակառակը, նրա ամենամեծ մասը մանաւանդ ամառվայ մէջ է պատահում: Այսպէս, 1871 թ-ականից մինչև 1875 թ-ականը պատահած 5,285 անձնասպանութիւններից 1,046-ը ձմեռվայ, 1,478-ը գարնան, 1,625-ը ամրան և 1,136-ը աշնան միջոցներն են պատահել: Շաբաթվայ չորս առաջին օրերում աւելի շատ է պատահում, նուազագոյնը շաբաթ օրվան է մնում, որը շաբաթական ռոճկի վճարման օրն է. գործաւորների մեծագոյն մասը կիրակի և երկուշաբթի օրերն են ընտրում անձնասպանութիւն գործելու համար:

(Կը շարունակվի)

բաբերութեամբ: Մի կարճ ժամանակի մէջ այդ տրամադրութիւնը փոխուեց, այնպէս որ վեց տարուց յետոյ անգլիական ժողովուրդը, նոյն այն մասսան, որ խորտակեց Գլադստոնի ծրագիրը, ընդունեց իրլանդական ինքնավարութիւնը: Ահա անհատների գործը: Տրամադրութիւնը մշակման, ուղղութեան է կարօտ:

Ի՞նչ է դուրս գալիս մեր ասածներից: Թողնենք գիտական ուսումնասիրները: Հասարակական այնպիսի կարգ, երբ չը կայ առաջնորդող և առաջնորդվող, երբ վերանում է ընտրեալների և հասարակ մահկանացուների դրութիւնը, մի Բէլլամի գուշակում է հարիւր տարուց յետոյ, իսկ մի Տարդ—հազար տարուց յետոյ: Մինչև այդ, յամենայն դէպս, ժամանակ շատ կայ: Մեր արեգակը առայժմ ծաղրում է այդ երազները. նա անհուն հասակ ունի, բայց դեռ չէ տեսել, որ իր լոյսի մէջ վերացած լինի անհաւասարութիւնը, որ թոյլը կարօտած չը լինի նեցուկի, տգէտը—առաջնորդի, հարստահարվածը—պաշտպանի: Քանի որ այդ լոյսի մէջ ենք, մասսան և անհատը իրանց որոշ ֆունկցիաները կունենան, նրանք կապված են միմեանց հետ, մէկը առանց միւսի ոչինչ է: Մասսայի դրութիւնը պահանջներ է ծնեցնում. անհատները մարմնացնում են այդ պահանջները, դառնում են նրա մշակողները, հայթայթում են ճար ու դարման գտնելու միջոցները: Առաջաւոր դասակարգը միջնորդ է հանդիսանում մի կողմից նոր մտքերի և միւս կողմից մասսայի մէջ, ժողովրդականացնում է գիտութիւնը, մրաքերը, պատասխանում է նրանց գործադրելով տեղական առանձնայատուկ նիւթերը, պաշպանելով իր գործը իր եռանդով, անձնազոհութեամբ, մինչև որ մասսան ինքն է դառնում նրա տէրն ու պաշտպանը: Միթէ ձեզ յայտնի չեն պատմական ամբողջ շրջաններ, որոնք լուսաւորվել են մի կամ մի քանի անհատների ձեռքով դըրսից բերած փոքրիկ շողերից: Միթէ ճիշդ է, որ մի չնական մասսա իր սեփական տրամադրութեամբ կը գտնէ իր փրկութեան ճանապարհը: Ո՛չ, դրա համար հարկաւոր է նախ ոչնչացնել դարաւոր անշարժութեան տրամադրութիւնը: Իսկ ո՞վ պիտի անէ այդ բանը: Անհատները ոչ միայն լոյս են տալիս, այլ բերում են թշուառութիւններ: Չնչեցէք Նապոլէոն III-ին իրան շրջապատող եղուիտների հետ, և այժմեան զինուորական բռնապետութիւնը չէր ճնչի Եւրոպան այնքան զարհուրելի կերպով: Եւ քանի որ կան այս բոլոր հանգամանքները, քանի որ պատմութիւնը այս դասերն է մեզ տալիս, յանցանք չէ քարոզել թէ ինտելիգենտ, աւելի պատրաստված ոյժերը մասսայի տրամադրութեան պիտի հետեւեն: Ցանցանք է, այո, և, մեր կարծիքով, մեծ յանցանք...

Վերջացնելով իմ խօսքը, ես բարոյական պարտականութիւն եմ զգում պախարակել և այն վիրաւորական ձևը, որին ապաստանել է յօդուածագիրը ոչ միայն այսպիսի խեղճ մտքեր պաշտպանելու, այլ և հակառակ կարծիքի տէր մարդկանց ծաղրելու համար: Լէօ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ֆրանսիական «Oeuvre d'Orient» հանդէսը իր վերջին համարում հաղորդում է, որ Եւրոպայի կաթոլիկները մինչև այժմ եօթ հարիւր հազար ֆրանկ են ուղարկել հայր Շարմրտանին Թիւրքաց Հայաստանի սովեալ հայերին օգնելու համար: Չը նայելով այդ առատաձեռն հանգանակութեան, կաթոլիկ միսիոնարները Վանի նահանգում չեն կարողացել ազատել սովեալներից շատերին մահից և միայն մի գիւղում, Գարակեօնդուզ անունով, երեսուն և վեց հոգի սովամահ են եղել: Վանի շրջակայ գիւղերում 5408 հայ և նեստորական սովեալ գիւղացիներ օգնութիւն են ստացել: Կարիքը այնքան մեծ է, որ հայր Շարմրտան, թէև շարունակ գումարներ է հասցնում Վանի ֆրանսիական հիւպատոսական գործակալ հայր Դեֆրանսին, բայց բազմաթիւ գիւղացիներ մնում են անօգնական և սոված: Սովատանջ հայերին օգնում են և ամէրիկական միսիոնարները:

—

Թէհրանում կատարված վերջին մինիստրական փոփոխութիւնից յետոյ, պարսից դիպլոմատիական մարմնի մէջ ևս զանազան փոփոխութիւններ են սկսել կատարվել: Թիֆլիսի պարսից ընդհանուր հիւպատոս Մուրթուզա խան Մումթազ-ուլ-Մուլքի տեղ նոր ընդհանուր հիւպատոս է նշանակվել Միրզա-Աբդուլ-Ցուսէյն խանը, որի տիտղոսն է Մուդիր-ուլ-Մուլք: Ի դէպ. «Кавказъ» լրագրի ասելով, նոր հիւպատոսը աստիճանով գենիերալ ֆելդմարշալ է և Շահի թիկնապահ: Մեր պաշտօնական լրագրի ասածը մի քիչ բացատրելու համար, պէտք է յայտնենք, որ Մուդիր-ուլ-Մուլքը ունի «Ամիր-Թումանի» աստիճան. թարգմանել այդ բառը «գեներալ ֆելդմարշալ» տիտղոսով սխալ է, որովհետև, ներկայումս Պարսկաստանում հարիւրաւոր «ամիր-Թումաններ» կան, որոնց մէջ և անչափահաս երեխաներ. այդ աստիճանը, ճիշդ է, սարթիպի կամ գենիերալի աստիճանից աւելի բարձր է, բայց նա լոկ մի պատուաւոր տիտղոս է: Նոր հիւպատոսը յունիսի 20-ին եկաւ Թիֆլիս և իջևանելով նախկին հիւպատոսի տանը, ընդունեց պարսիկ հպատակներին ու հանդիսաւոր կերպով կարդաց նրանց շահի ֆիրմանը:

—

Յունիսի 16-ին Յարսկօե-Սելօյում վախճանվեց սենատոր Ֆէօկտիստով, որ երկար ժամանակ ժամուլի գործերի գլխաւոր վարչութեան գլխաւորն էր: Ֆէօկտիստով մեռաւ 69 տարեկան հասակում: Վախճանական թուականներին նա գործում էր ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան մէջ. 1871 թուին նա նշանակվեց «Журналъ министерства народнаго просвѣщенія» հրատարակութեան խմբագիր. 1883-ին նշանակվեց մամուլի գործերի գլխաւոր վարչութեան կառավարիչ և այդ պաշտօնում մնաց ամբողջ 13 տարի մինչև 1896 թիւը, երբ նա նշանակվեց սենատի անդամ, իսկ նրա պաշտօնը յանձնվեց պ. Սօլովիեվին:

—

Մենք ստացանք «Финляндія» անունով մի մեծ հրատարակութիւն, որ բաղկացած է 480 մեծադիր երեսներից և պարունակում է իր մէջ շատ հետաքրքիր և ուսանելի տեղեկութիւններ Ֆինլանդիայի մասին: Գրքին կցված են Ֆինլանդիայի աշխարհագրական քարտէզը և մի քանի պատկերներ: Գիրքը կազմված է բազմաթիւ յօդուածներից, որոնցով զանազան հեղինակներ ծանօթացնում են մեզ Ֆինլանդիայի հասարակական և տնային կենցաղավարութեան հետ: Ընդհանուր խմբագրութիւնը արել է Դ. Պրոտոպոպով, իսկ հրատարակիչն է յայտնի Օ. Պոպովա: Ցանձնարարում ենք մեր ընթերցողներին կարդալ այդ գիրքը և ծանօթանալ մի փոքրիկ ազգի կուլտուրական գործերի հետ:

—

Ինչպէս յայտնի է, ինտենդանտատվօն ամեն տարի մեծ քանակութեամբ հաց է ամբարում զինուորների համար: Փորձը ցոյց տուեց, որ հացի այդ պաշարները կարող կը լինեն թանգութեան տարիներում մեծ օգնութիւն հասցնել աղքատներին, իջեցնելով հացի գինը և հայթհայթելով ժողովրդին փոխարինաբար հաց: Այժմ մի առանձին յանձնաժողով մշակում է մի ծրագիր, որով ինտենդանտատվօն պէտք է այնքան հաց ամբարի, որքան հարկաւոր է գալիս պատերազմական ժամանակ և այդպիսով միջոց ունենայ հացի իր պաշարներով զսպել այն թանգութիւնը, որ առաջ է գալիս անբերրի տարիներում:

—

Մեր քաղաքների ինքնավարական մարմիններին կարևոր է գիտենալ, որ ներքին գործերի մինիստրութեան կարգադրութեամբ, այսուհետև, ամեն անգամ, երբ նրանք ներկայացնելու լինեն խնդիրք այս կամ այն հիմնարկութիւնը բանալու համար, պարտաւոր են մանրամասն ցոյց տալ այն նիւթական աղբիւրները, որոնք պէտք է օժանդակեն հիմնարկութիւնների պահպանութեանը: Այլապէս, յարուցած խնդիրները կը մնան անհետևանք:

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են. «Այս տարի բերքը առատ է: Արտերը լաւ են և եթէ մինչև 15 կամ 20 օր էլ անվտանգ մնալու լինեն՝ առատ հունձ կը լինի և հացահատիկների հունձը չափազանց կուրախացնի գրեթէ երեք տարի շարունակ նեղութիւններ կրած ժողովրդին: Վաղուց է, որ առեստրը ընկած է և «քեասատութիւնը», բառի ընդարձակ մտքով, թաղաւորում է:»

—

Գանձակի նահանգի ՂԱՐԱՋԻՆԱՐ գիւղից մեզ գրում են. «Մեր գիւղը ահա մի քանի տարի է առանց քահանայի է մնացել, չը նայելով որ բաղկացած է մօտ 200 նիւթապէս համարեա ապահով տներից: Ինչպէս լսում ենք, հոգևոր վարչութիւնը, երևի զիջանելով որոշ նպատակի ձգտող մարդկանց խնդիրքին, հակառակ իր կարգադրութեան, որոշել է ձեռնադրել մեր գիւղի հանգուցեալ քահանայի որդուն, որը անպայման տգէտ է և անարժան այդ կոչման համար: Ինչ պիտի սպասել այնպիսի մի քահանայից, որ հազիւ կարդալ միայն գիտէ. ինչ հեղինակութիւն պիտի ունենայ նա այն գիւղում, ուր կան բաւական թիւով հասկացող, փոքր ի շատէ ուսում առած երիտասարդներ: Ցանկալի է աւելի արժանաւոր անձնաւորութիւն տեսնել այդ պաշտօնի մէջ մեր գիւղում:»

—

ԳԱՆՁԱԿԻ դաւառի գերմանական Ելենենդորֆ գիւղից հաղորդում են, որ խաղողի վազի վրա երևացել է մի վարակիչ հիւանդութիւն, որ շատ նման է միլդիու հիւանդութեան:

—

ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐԻՑ մեզ գրում են. «Մեր իգական գիմնազիան այս տարի աւարտեցին հետևեալ 9 հայ աղջիկները. Արաղեանց Գայիանէ, Աբիսողոմեանց Լիդիա, Բաշմաքեանց Գայիանէ, Թեմիրեանց Մարիամ, Թորոսեանց Թագուհի, Հալաջեանց Հեղինէ, Հալաջեանց Գայիանէ, Ցակոբջանեանց Եղիսաբէթ և Քերեմեաչեանց Նունէ:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Յայտնի է, որ Կ. Պոլսի պատրիարքարանը Սիսի կաթողիկոսական տեղապահ ընտրեց Սահակ եպիսկոպոս Խապայեանին, որպէս զի նա իբրև պատրիարքարանի նուիրակ՝ կաթողիկոսական ընտրութիւն կատարել տայ Սիսում: Արդարադատութեան մինիստրը, սակայն, չընդունեց պատրիարքարանի այդ վճիռը և յայտնեց Օրմանեանին թէ Սիսի կաթողիկոսութիւնը պատրիարքարանից որ և է կախում չունի, թէ կաթողիկոս կարող է ընտրել միմիայն Սիսի միաբանութիւնը, այն էլ բացառապէս իր անդամներից մէկին: Օրմանեան բողոք ներկայացրեց այդ առիթով և յայտարարեց թէ ինքը չէ կարող մնալ իր պաշտօնում, եթէ չը փոխվի մինիստրի կարգադրութիւնը: Եղբայր-Քիւսկից բերանացի յայտնեցին պատրիարքին, թէ մինիստրի կարգադրութիւնը կը փոխվի, բայց պատրիարքարանում այդ յայտարարութիւնը բաւարար չեն համարում, այնպէս որ այժմ Սիսի հարցը սուր կերպարանք է ընդունել:

—

Թիւրք կառավարութիւնը Աղանայում մեծացրել է իր զօրքերի թիւը, որպէս զի եթէ Սիսում անկարգութիւններ ծագեն, իսկոյն ճնշէ նրանց:

ՊԱՏԵՐԱԶՄ

—

Ինչպէս երևում է վերջին հեռագիրներից, ամերիկո-սպանիական պատերազմը մտել է նոր շրջանի մէջ. այլ ևս ծովային ահարկու վիթխարիները չեն միայն կռիւ վարում, այլ այժմից կրակի մէջ մտան և ցամաքային զօրքերը: Սանտ-Եագոյի շուրջը բոլորված պատերազմը վճռական նշանակութիւն պիտի ունենայ: Դատելով մինչև այժմ եղած ընդհարումներով, ամերիկացիները ամեն տեղ աջողութիւն են ձեռք բերում: Այսպէս, գեներալ Շաֆտէրի հեծելազօրքը արդէն հասել է Սանտ-Եագոյ դռներին: Կուբը առաջին անգամ սկսեցին սպանիացիները. բայց չը նայած որ նրանք թէ թուով շատ էին և թէ աւելի յարմար ու ամուր դիրքեր էին գրաւել, մի ժամ տևած կռիւը պարտութիւն էր նրանց համար: Ամերիկացիները յետ մղեցին նրանց, թողնելով կռուի դաշտում 13 սպանված և 30 վիրաւորված զինուորներ: Բանից դուրս է գալիս, որ սպանիացիները ամերիկացիներից շատ դիմացկան չեն նոյն իսկ ցամաքային կռուի մէջ: Այդ է պատճառը, որ պատերազմի ելքը աւելի քան պարզ է շատերի համար. և Ֆրանսիական «Temps» լրագիրը, որ կիսապաշտօնական օրգան է, հաստատապէս ասում է, որ սպանիացիների դիմադրութիւնը այլ ևս աւելորդ է, աջողութիւնը ամերիկացիներին է պատկանում: Դրութիւնը կարող է բարդվել, երբ ամերիկական նաւերը կը սկսեն ռմբակոծել Սպանիայի ափերը. զանազան տեղերից եկած տեղեկութիւնները հաստատում են, որ Ամերիկան այսպիսի դիտաւորութիւն ունի և պատրաստում է դրա համար մի յատուկ նաւատորմ:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԸ

—

Երեքշաբաթվայ մինիստրական ճգնաժամից յետոյ Ֆրանսիայում կազմվեց վերջապէս արմատական մինիստրութիւն, Բրիսսոնի նախագահութեամբ: Ֆրանսիական կառավարութեան գլուխ անցաւ այն կուսակցութիւնը, որը, թէև պարլամենտական ընտրութիւնների ժամանակ յաղթվեց, բայց կարողացաւ տապալել Մէլլին-Հանոտոյի չափաւոր հանրապետական մինիստրութիւնը: Ուրիշ հանգամանքներում և պայմաններում՝ արմատական մինիստրութեան կազմութիւնը կարող էր մեծ անհանգստութիւն պատճառել Եւրոպային և բոլորովին անակնկալ հետևանքներ ունենալ Ֆրանսիայի համար, բայց նոր մինիստրութեան յայտարարութիւնը այնպիսի չափաւոր լեզու է բանեցնում, որ ոչ մի երկիւղի կամ յուզմունքի տեղիք չէ ներկայացնում, որովհետև, ինչպէս նկատում է «Temps» լրագիրը, «Բրիսսոնի մինիստրութիւնը կարելի է համարել լոկ իբրև Մէլլինի մինիստրութեան շարունակութիւն, քանի որ նրանց ծրագիրները բոլորովին նման են միմեանց:» Նոր մինիստրութեան յայտարարութիւնը, ինչպէս հաղորդում են հեռագիրները, ամենից առաջ յայտնում է, որ «պէտք է յարգել զօրքը և արդէն կայացած դատաստանական վճիռները (chose jugée)», ուրեմն նա ևս հակառակ է Դրեյֆուսի գործի վերանորոգման: Դրանից յետոյ նա յայտնում է, որ մտադիր է վերականգնել հացի վրա դրած հարկը յուլիսի 1-ից, ինչպէս մտադիր էր այդ անել Մէլլինը և միանգամայն հրաժարվում է պրոգրէսիվ հարկից, այսինքն այն հարկից, որի վրա պնդում էին մինչև այժմ իրանք արմատականները և սոցիալիստները: Ուրեմն ներքին քաղաքականութեան մէջ արմատական մինիստրութիւնը մտադիր չէ արմատական փոփոխութիւն մտցնել: Գալով արտաքին քաղաքականութեան, նրա մէջ ևս որ և է փոփոխութիւն դժուար թէ տեղի ունենայ, ի նկատի ունենալով Եւրոպայի այժմեան քաղաքական վիճակը: Այդ բոլոր հանգամանքները ի նկատի ունենալով, դժուար թէ Բրիսսոնի մինիստրութիւնը տևողական լինի, որովհետև նա իր դէմ ունենալով չափաւոր հանրապետականներին, սոցիալիստներին և կղերականներին, հաւանօրէն չէ կարող յենվել պարլամենտական հաստատ մեծամասնութեան վրա:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Ֆրանսիական արտաքին գործերի նոր մինիստր Դելկասսէ առաջ «République Erancaise» լրագրի արտաքին բաժնի խմբագիրն էր:

—Աւստրիական Գալիցիայի շրջանում հակահրէական խռովութիւններ ծագած լինելու պատճառով, այդ շրջանի մի քանի տեղերում պաշարման դրութիւն է հրատարակված:

—«Temps» լրագրի թղթակիցը հաղորդում է Ցետինէյից, որ ալբանացիների ձեռքով այրված քրիստոնեաների տների թիւը 460 է, իսկ քրիստոնեաներից սպանվել են 62 հոգի: Կողոպտող մահմեդականների թիւը հասնում է 600-ի և դրանք իրանց աւազակութիւնները կատարում են թիւրքաց իշխանութեան աչքի առաջ: Այդ պատճառով Զերնոգորիայի սահմանակից գաւառներից քրիստոնեաները մեծ բազմութեամբ փախչում են Զերնոգորիա և վերջինս ստիպված է զէնքի կանչել իր զօրքը: Զերնոգորիական կառավարութիւնը մի ամբողջ զօրագունդ ուղարկեց սահմանագլուխը փախստականներին ընդունելու և ալբանցիների յարձակման դէմ դնելու համար:

—Կրետէի ազգային ժողովը մի զեկուցագիր ներկայացնելով եւրոպական ծովակալներին, յայտնում է, որ կղզու ազգաբնակութիւնը այժմ, համեմատաբար, խաղաղ է, և սպասում է, որ մեծ պետութիւնները կատարեն իրանց խոստումը, այն է՝ 1) տան կղզուն լիակատար ինքնավարութիւն՝ սուլթանի գերագոյն իշխանութեան ներքոյ, 2) կրետացիները բոլորովին անկախ լինեն Բ. Դռնից՝ իրանց ներքին գործերի վերաբերմամբ, 3) օսմանեան զօրքերը հեռանան կղզուց: Սակայն, աւելացնում է զեկուցագիրը, խաղաղութիւնը չէ կարող երկար տևել, եթէ ամենամօտ ապագայում այդ խոստումները վերջնականապէս չը կատարվեն:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ԱՄԵՐԻԿՈ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

—

ՊՈՐՏՈ-ՐԻԿՈ, 19 յունիսի: Անդրատլանտեան «Անտոնիո Լոպէց» շոգենաւը, որը գնում էր Սպանիայից զէնքի և պատերազմական պաշարների բեռնով, ենթարկվեց հալածանքի ամէրիկական երկու կրէյսերների կողմից: Նրանցից փախչելու համար, շոգենաւը փորձեց կանգ առնել ծանծաղուտի մէջ, որը և աջողվեց նրան, բայց այդ ժամանակ կաթսան տուաքվեց: Այդ ժամանակ սպանիական նաւերը երևացին նաւահանգստից, և ամէրիկական կրէյսերները հեռացան:

ՆԻՒ-ԵՕՐԿ, 19 յունիսի: Կինգստոնի սպանիական հիւպատոսը մի հեռագիր ստացաւ, որից երևում է, որ ամէրիկական «Բրուկլին» կրէյսերի մէջ ընկաւ սպանիական ռումբ, որից նաւատորմի հրամանատարը և 24 մարդիկ, իբր թէ, սպանվեցին:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 19 յունիսի: Պաշտօնական շրջանները ոչինչ հաւատ չեն ընծայում «Բրուկլինի» հետ պատահած դժբաղդութեանը: Կարծում են, որ Սամպսոն կը տեղեկացնէր, եթէ այդ բանը ճիշդ պատահած լինէր:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 19 յունիսի: Շաֆտէր յայտ է յայտնում, որ իրան կաջողվի տիրել Սանտ-Եագոն, հէնց որ ինքն պատրաստ կը լինի արշաւանքին: Նա օգնական զօրքերին չէ սպասում: 8,000 մարդիկ մեծ պաշարով և մսացու ֆենդանիներով գնում են օգնութեան սպանիացիներին, բայց գտնվում են դեռ ևս 54 մղոն հեռու Սանտ-Եագոյից: Այստեղ կարծում են, որ Շաֆտէր դիտաւորութիւն ունի վերջնական հարուածը տալ, նախ քան կը մօտենան սպանիական օգնական զօրքերը:

ՊԼԱՆԴԷԼՍՏԷ, 21 յունիսի: Առաւօտեան 11 ժամին, Լաւտոնի գիվիզիան գրաւեց Կաբանո, որը Սանտ-Եագոի արուարձանն է: Նաւատորմը ռմբակոծում է Մօրրօ մարտկոցը և ուրիշ մարտկոցներ նաւահանգստի մուտքի մօտ: Սպանիա-

կան նաւատորմը ռումբեր է արձակում ամէրիկական զօրքերի վրա, որոնք բոլորովին մօտեցել են քաղաքին:

ՆԻՒ-ԵՕՐԿ, 21 յունիսի: Սիբօնէյից ստացված հեռագրի համեմատ, երէկ սկսվեց և հինգ ժամ տևեց ամենախիստ կռիւ: Կէսօրից յետոյ 3½ ժամին սպանիացիները յետ քաշվեցին գրսի ամրութիւններից դէպի քաղաքը:

ՊՕՐՏ-ՍԱՒԻ, 21 յունիսի: Սպանիական նաւերը դուրս եկան նաւահանգստից՝ ածուխի պաշար վերցնելու համար:

Ամէրիկական «Սան-Ֆրանցիսկո» կրէյսերը մըտաւ ջրանցքը:

ՊԼԱՆԱԴԷԼՖԻՍՏԷ, 21 յունիսի: Կռիւը տևեց մինչև գիշեր: Ամէրիկացիները գրաւեցին Սանտ-Եագօի առաջ եղած ամրութիւնները: Կռիւը կը վերսկսվի, երևի, լուսադէմին: Ամէրիկացիները մեծ կորուստներ կրեցին:

ՄԱԴՐԻԴ, 21 յունիսի: Հեռագիր Մանիլայից, գեներալ Առդուստիից. «Գեներալ Մօնէտ, պատերազմելով, իր 1000 մարդուց բաղկացած զօրաբաժնով հասաւ մինչև Մակաբէբէ, ուր և ամրացաւ: Եթէ թշնամին կը ժամանայ մայրաքաղաքին, ես Մօնէտին հրաման կը տամ թշնամու զօրքի միջով անցնել և ինձ օգնութեան գալ, թէպէտ այդ բանը դժուար եմ համարում:»

ՍԻԲՕՆԷ, 21 յունիսի: Ամէրիկացիների կորուստները երէկվայ կռիւի մէջ 1000 մարդուց աւելի են համարում: Ամէրիկական բոլոր պահեստի զօրքերը առաջ են քաշված՝ կռիւը վերսկսելու համար: Սպանիացիների ամրութիւնները չատ զօրեղ են: Սպանիական նաւերից արձակած ռումբերը մեծ աւերմունքներ գործեցին:

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 21 յունիսի: Զինուորական մինիստրութիւնը Շաֆտէրից, Սիբօնէյից, հեռեւալ հեռագիրը ստացաւ. «Մենք լուրջ կռիւ ունեցանք, որ տևեց առաւօտեան 8 ժամից մինչև արեգակի մայր մտնելը: Մենք գրաւեցինք գրսի ամրութիւնները, որոնք մեր ձեռքում մնացին: Ներկայ րոպէում իմ գծի և քաղաքի մէջ ¾ մղոն տարածութեամբ բաց դաշտ է մնում: Զօրքերը ամրացան մինչև վաղվայ առաւօտը, երբ կը ժամանեն նշանաւոր թիւով օգնական զօրքեր: Լաուտոնի դիվիզիան և Բէատսիի բրիգադան, որոնք ամբողջ օր պատերազմեցին Էլգանէի գրաւման ժամանակ, իրանց նպատակին հասան: Գիշերը նրանք կը մօտենան Սանտ-Եագօին:»

Շաֆտէրի հեռագիրները հաղորդում են, որ ամէրիկացիները կորուստ ունեցան մինչև 1000 մարդ: Փչեայ թուփի խտութիւնը թոյլ չէ տալիս ճիշդ հաշուել: Մինչև կէսօր ոչինչ չէր լսվում պաշարման վերսկսելու մասին: Մօտ 50 բժիշկներ հրաման առան միանալ զօրքին: Շաֆտէր խորհրդակցում է զինուորական հրամանատարների հետ: Զինուորական շրջանները Վաշինգտօնում մտատանջութեան մէջ են:

«Even. World»-ին հեռագրում են Պլանադէլֆստէից, որ գեներալ Պանդօ, 6000 մարդուց բաղկացած զօրաբաժնով, մտաւ Սանտ-Եագօ:

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յունիսի: Յունիսի 18-ին Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորօվնա Օգոստափառ երեխայով Գատչինօից գնաց Նովի-Պետերհոֆ ամառն անցկացնելու համար:

ԱՍԽԱԲԱԴ, 19 յունիսի: Յունիսի 15-ին անդրկասպեան երկաթուղու կայարաններում Սանդաջիից մինչև Ախչա-Կրէմ երկրաշարժ տեղի ունեցաւ, որ տևեց երկու րոպէ և լսվում էր ստորերկրեայ խուլ ձայն: Ճանապարհը վնասված չէ:

ՀՌՕՄ, 19 յունիսի: Մինիստրութիւնը կազմված է: Պէլլու նախագահ է և ներքին գործերի մինիստր:

Կ. ՊՕԼԻՍ, 19 յունիսի: Սուլթանը Կրետէի մահմեդականներին տուել 10,000 ֆունտ յունական պատերազմական տուգանքից:

ՊԱՐԻԶ, 19 յունիսի: Մինիստրների խորհրդում վճռված է հացի մաքսահարկ վերցնել լիակատար կերպով յուլիսի 1-ից:

ԲՈՒԴԱՊԵՇՏ, 19 յունիսի: Ունգարիայի մեծ մասում կարկուտ եկաւ, ահագին աւերմունքներ գործելով:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յունիսի: Յունիսի 15-ին, երբ Սիամի պրինց Չակրաբոն ձիով զբօսնում էր, պրինցի ձին կատաղեց և վայր գցեց պրինցին: Պրինցը սաստիկ վնասվեց:

ԲԵԼԳՐԱԴ, 21 յունիսի: Սկուպշչինան բացվեց գահական ճառով:

ՎԻԵՆՆԱ, 21 յունիսի: «Neue Freie Presse» լրագրի տեղեկութիւնների համեմատ, կառավարութիւնը մշակեց մի օրինագիծ լեզուների մասին, որը կոմս Տուն հաղորդեց չեխական խոշոր երկրագործութեան ներկայացուցիչներին: Լուրերին նայելով, նրանք համաձայնվեցին նախագծի հետ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 19-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ	94 ռ.	40 կ.
Բերլինի վրա 100 մարկ „ „	46 „	27½ „
Պարիզի վրա 100 ֆրանկ „ „	37 „	42½ „
Պոլուխպիրեալ	— „	— „
Մաքսային կուպոնները	149 „	— „
Բօրսային դիսկոնտ	5 „	6½ „
4% պետական ըստամ	101⅝ „	— „
4% նեղքին փոխառութեան	100½ „	— „
4½% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	— „	— „
4½% վկայակ. գիւղ. հող. բանկի	100⅜ „	— „
Նեղքին 5% առաջին փոխառութ.	286¾ „	— „
Նոյնը „ երկրորդ —	247½ „	— „
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	216¾ „	— „
5% պետական երկաթուղ. ըստամ	— „	— „
Պետերբ. քաղ. կը. ընկ. օբլ. 5%	100⅞ „	— „
Մոսկվայի քաղաք. կը. օբլիգացիաները	101 „	— „
Օդէսայի — —	100 „	— „
Թիֆլիսի — —	100⅛ „	— „
Թիֆլիսի կալ. բանկի 6% —	— „	— „
Նոյնը — — 5% —	100½ „	— „
Քուլթայիսի կալ. բանկի. 6%	102 „	— „
Նոյնը — — 5%	100 „	— „

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տեսնելով որ մեր առաջի տպագրած

ԷՓԻՄԵՐՏԻ-ԵՐԱԶԱԳԻՐՔԸ

սպառված է և ամեն կողմից պահանջ ու կարօտութիւն է զգացվում, այս տարվայ յունվարից պարտաւորվեցի դերքը երկրորդ անգամ յանձնել տպագրութեան: «Էփիմերտէ-երազագիրք»-ը, հայի անբաժան ընկերը լինելով՝ կատարում է նրա համար «Ոսկի բարեկամի» պաշտօն. այս պատճառով սկսեցի բազմատեսակ և բազմակողմանի և միանգամայն կեանքի ամենահարկաւոր և օգտաբեր գոհարներով և մանաւանդ «առողջապահական և բժշկական» ճոխ նիւթերով հարստացնել և բոլորի համար յիրաւի «ոսկի բարեկամ և ոսկի ընկեր» դարձնել. և այսպէս կրկնակի օգտաւէտութեամբ մատչելի անել բոլորին: Գիրքը իր ստուարութեամբն առաջի տպագրութեան եռապատիկն է. մի օրինակի գինը 2 ռուբլի 70 կոպէկ է: Սրանով յայտնում եմ բոլորին՝ մանաւանդ մեծ. նամակագիրներին, որոնցից շատերը հատով և շատերը դումարով նախապէս ցանկութիւն են յայտնել գնելու. թող բարեհաճեն գները կանխիկ ուղարկել և գրքերը պօստով ստանալ: Անպառիկ՝ ոչ հատով և ոչ դումարով ոչ ոքի չի ուղարկվի:

1—5 Գրիգոր քահանայ Մանդակունի

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ աւարտել է հաշուապահութիւն Մանուէլեանցի կուրսերում, ցանկանում է որ և է պաշտօն ունենալ դրասենեակներում, նոյն իսկ փոքր ռոճիկով: Հասցէն թողնել Բարեգործական ընկերութեան դրասենեակում: 1—3

Լոյս տեսաւ
ԼԵՒՈՆ ԽԱՆ-ԱՂԵԱՆԻ
Գիւղատնտեսական գործիքներ եւ մեքենաներ
Բացատրական բառարանով և 250 նկարով:
Հրատարակութիւն Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան:
ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ.
Դիմել՝ ТИФЛИСЪ Общество изданія армянск. книгъ, Баронская, 12. 22—40

«Բեսարաբիայի Բելց քաղաքի գիւղերից մինում, մի հայ կալուածատիրոջ երկու երեխաներին գիմնազիայի առաջին և երկրորդ դասարանները պարաստելու համար՝ հարկաւոր է մի

ՀԱՅ ՎԱՐԺՈՒՀԻ,

որը լաւ գիտենայ հայերէնի հետ՝ ռուսերէնը մաքուր առոգանութեամբ, ֆրանսերէնն ու գերմաներէնը բոլորովին վարժ, ու դաշնամուրի վրա էլ կարողանայ նուագել գոնէ չափաւոր: Պայմանները շատ աջող են. բնակարան, ճաշ և լաւ ռոճիկ. առնուազն մի տարի մնալու պատասխանատուութեամբ: Պայմանների մանրամասնութիւնների մասին դիմել կամ г. ОРГѢЕВЪ (Бессарабія), священику Затикянцу և կամ г. БѢЛЦЫ (Бессарабія), Акопу Сергѣевичу Поповичу вотч. Еленовка. 10—10

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և մկանաբեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ—10½—11½ ժ.: կանանց և երեխայոց հ., ծաղկի պատուաստումն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11½—12 ժ. կանանց հիւանդ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԴՈՒՐԿՕ—1½—2½ ժ. ներքին, և մրգաստեռական հ. ականջի, կոկորդի և քթի հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՋԷ—6—7 ժ. ներքին և երեխայոց հ. նեարդային և մորթի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն:
Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ՝
134—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Ներսիսեան դպրոցի
բարձր դասարանի աշակերտ ուզում է տեղ ունենալ դրավաճառանոցներում, դրասենեակներում և ուրիշ հաստատութիւններում: Հասցէն՝ Авлабаръ, Озеровская, А. Агабабяну. 2—3

ԵՐԴՈՒԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ
Սամսոն Ստեփանեան
ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԴՈՅՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՈՐԾԵՐ
ԲԱԳՈՒ. հիւրանոց «Գրանատ-Օտէլ» (հ. չ. ե.) 7—10

Կենտրօնական և Կովկասեան դրավաճառանոցներում վաճառվում են «ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ» խորագրով հետեւեալ գրքերը:

ԱՆՏԱՌԱՊԱՀԸ, Սմիրնօվա, գինն է	12 կ.
ԱՇԵՏՆՆ ՈՒ ՄԱՐԳԱՐԻՏԸ, Ռօգօվա	10 »
ԱՂՔԱՏԻ ԲԱԽՏԸ, Անդրէեվա	5 »
ԳՈՀԱՐԻԿՆ ՈՒ ԱՍՏՂԻԿԸ, Աննենսկայա	10 »
ՆԵԼԼՕՆ ԵՒ ՊԱՏՐԱՂԸ, ՈՒԻԳԱՑ	10 »
ԳԻԻՂՈՒՄ, Երգօլսկայա	20 »

4—6

ԲԺՇԿԱՊԵՏ
ԶԱԽԱՐԻԷԳԵԱՆ
ամառը ընդունում է հիւանդներ
ԿՈՎԿԱՍԻ ՀԱՆՔԱՅԻՆ ԶՐԵՐՈՒՄ.
Հասցէն՝ Պետերբուրգ. տ. «Սեկօնի լիստօկ»: 9—12

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԼԷՕ
ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ
(Պատմական վէպ 753 երես):
Գինը 1 ռուբլի 30 կոպէկ: Դիմել հեղինակին. ТИФЛИСЪ, редакція „Мшакъ“.
Թիֆլիսում ծախվում է և Կենտրօնական դրավաճառանոցում: 1—10

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՒ ԻՄԵՐԷԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԿՕՆՍԻՍՏՕՐԻԱՅԻ տոնի մէջ նշանակված է ԱՃՈՒՐԴ 24-ին սոյն յունիսի, առանց կրկնաճրդի, կապալով տալու Էջմիածնի տունը իր խանութներով, որ գտնվում է Պուշկինեան փողոցի վրա: Աճուրդին մասնակցողները պէտք է ներկայացնեն գրաւական. իսկ պայմանների մասին կարող են տեղեկանալ կոնսիստորիայի դիւանատանը:
3—3 Անդամ կոնսիստորիայի՝ Թադէոս վարդապետ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Նաղօնայա փողոց, № 9)
Յանկացողները ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատեստատներ:
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-Ի:
Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Ծալիանօվների բանկային դրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում: Օտարաքաղաքացիները դիմում են՝ ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу. (և) 2—12

Նոր ստացվել են արտասահմանից
ԿԱՆԱՉԱԳՈՅՆ ԵՒ ԽՕՍՈՒՆ ԹՈՒԹԱԿՆԵՐ
և զանազան օտարերկրեայ թռչուններ: Նոյն տեղում ցանկանում եմ գնել Կովկասեան կենդանի վայրենի անասուններ, օրինակ եղջերու, պարսի, ջէյրաններ, վայրի խոզեր և այծեր և զանազան տեսակ թռչուններ:

Պէտք է դիմել հեռեւալ հասցէով՝ Միքայէլեան փողոց № 106, Բարամօվի տուն:
Գուգօ Վինկլեր
(ռ. ե. հ.) 4—12

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթիից,
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէյլ, մտնելով Տրապիզոն, Սամսօն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 24 յունիսի (6 յուլիսի) ՍԻՐԿԱՍԻ շոգենաւը, նաւապետ ԳԱԲՐԻԿ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փող. նախկին Արծրունու քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Գիլդարեանին, Կոլիբեակինսկայա հրապարակ: ՆՕՎՈՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիօր Հերշենզոնին: (ռ. հ. շ.) 4—20

Дозволено цензурою, Тифлисъ, 22 Іюня 1898 г. Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13